ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

<<ՀՔ-ՊԸԱՇՁԲ-17/1>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հանձնաժողովի հայտերի բացման նիստի

ք. Չարենցավան _11_ _ապրիլի_ _2017թ._
ժամը _16^{00}_

Հանձնաժողովի նախագահ՝ Բ. Բալբաբյան (ԳՊ/ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Թովմասյան (ԳՊ/ԳԱ)
Ռ. Սահակյան (ԳՊ/ԳԱ)
Ա. Խանյան (ԳՊ/ԲԱ)
Հ. Մանուկյան (ԳՊ/ԲԱ)
Հանձնաժողովի քարտուղար՝ Պ. Գաբրելյան (ԳՊ/ՄՀմ)

1. <<ՀՔ-ՊԸԱՇՁԲ-17/1>> ծածկագրով պարզեցված ընթացակարգի հայտերի բացման մասին

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետև՝ Համակարգ) միջոցով 2017 թվականի ապրիլի 11-ին ժամը 16^{00}-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

2. Տեղեկատվություն գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գնի և հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

2.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 1-ին ենթակետի դրույթներով՝ հանձնաժողովի նախագահը հայտարարեց գնման առարկայի ընդհանուր նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված.

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի ընդհանուր գինը՝ մեկ թվով արտահայտված (ՀՀ դրամ)
1	Չարենցավան համայնքի կենտրոնական փողոցների ասֆալտապատ տարածքների վերանորոգման աշխատանքներ	9972000

2.2 Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակիցների			
	Անվանումը	Էլեկտրոնային փոստի հասցեն	Գտնվելու վայրը (հասցեն)	Տ/Փ-ի ստացականի հ/հ
1	<<ՄԵՀԵԿԱՆ>> ՍՊԸ	mehekan@yandex.ru	Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Կոտայքի փ. 2	000040086
2	<<Վահրադյան Շին>> ՍՊԸ	vahradyanshin@yandex.ru	ք. Ստեփանավան, Չարենցի 175	000040120
3	<<ԲԱԼԱՀՈՎԻՏ 1>> ՍՊԸ			000040146

2.3 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը www.armeps.am կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի, բացառությամբ՝ <<ԲԱԼԱՀՈՎԻՏ 1>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, քանի որ որևէ փաստաթուղթ առկա չէ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացրած գնային առաջարկների մասին

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված են ստորև.

Հ/հ	Մասնակիցների անվանումները	Մասնակիցների կողմից առաջարկված գները, ընդ որում՝ (ՀՀ դրամ)		
		Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Առաջարկված ընդհանուր գինը
1	<<ՄԵՀԵԿԱՆ>> ՍՊԸ	4729996	945999	5675995
2	<<Վահրադյան Շին>> ՍՊԸ	7215000	1443000	8658000

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

4. Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին

4.1 <<ՄԵՀԵԿԱՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, բացառությամբ՝

ա) Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի համաձայն՝

- վճարման պահանջագրում ներկայացման ամսաթիվը լրացվում է շահառուի կողմից՝ վճարողի բանկին վճարման պահանջագրի ներկայացման օրը, այնինչ <<ՄԵՀԵԿԱՆ>> ՍՊԸ-ի կողմից լրացվել է վերոնշյալ ամսաթիվը:

4.2 <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը (հայտում ներառված փաստաթղթերը) կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

5. Տվյալներ ներկայացված հայտերի գնահատման արդյունքների և մասնակիցների զբաղեցրած տեղերի մասին

5.1 Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

ա) Գնահատել բավարար <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը,

բ) Գնահատել անբավարար և մերժել <<ՄԵՀԵԿԱՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

5.2 Ներկայացված և բավարար գնահատված հայտերի հիման վրա առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Վահրադյան Շին>> ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

6. Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից կատարվելիք գործողությունների մասին

6.1 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝

ա) Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ.

բ) Ծանուցել առաջին տեղ զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ մինչև 2017 թվականի ապրիլի 18-ը ներառյալ, ներկայացնել հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը.

գ) 6.1 կետի բ) ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0:

Հանձնաժողովի նախագահ՝	_____ (ստորագրությունը)	**Բ. Բալբաբյան**
Հանձնաժողովի անդամներ՝	_____ (ստորագրությունը)	**Վ. Թովմասյան**
	_____ (ստորագրությունը)	**Ռ. Սահակյան**
	_____ (ստորագրությունը)	**Ա. Խանյան**
	_____ (ստորագրությունը)	**Հ. Մանուկյան**
Հանձնաժողովի քարտուղար՝	_____ (ստորագրությունը)	**Պ. Գաբրելյան**